Կոլեկտիվացման որին պիտի համաձայնեցնել կոլտնտեսու-
թյունների, խորհրդատեսությունների, ՄՏԿ-երի՝ մասսայական ժո-
ղովներում, հավաքություններում, կոնֆերանսներում, լրագրերում,
իրենց կողմից բերքահավաքի աշխատանքների, հացամթերման, աշ-
խատանքների, իրենց չըջանում կոլեկտիվացման զարգացման ու սմ-
րապնդման և այդ աշխատանքների վերաբերյալ արվելիք ուսուցիչ-
ները:

Միայն այն չըջանը, այն գյուղխորհուրդը, այն խորհրդատե-
սությունն ու կոլտնտեսությունն են արժանի գլխավորելու կոլեկ-
տիվացման ու բերքահավաքի տոնը, վորն ամեն ինչ կանի, վոր-
պեսզի այդ որվա համար կատարած լինի աշխատային բոլոր աշխա-
տանքները և իրագործած հնգամյակի Յ-րդ տարվա խնդիրները:

Շրջանը հանդիսանում է կոլեկտիվացման և բերքի տոնն անց-
կացնող քաղաքական-տնտեսական կենտրոնը:

Այստեղ նախորդ պիտի կազմել այդ տոնը կազմակերպելու և
կատարելու սյալանը:

Այստեղ ել պիտի կենտրոնացվի այդ դործի հասարակական-
քաղաքական ղեկավարությունը:

Կուլակցական որդանների ղեկավարությամբ տոնի կազմա-
կերպման ու ղեկավարման համար պիտի ներգրավվեն տեղական
բոլոր կազմակերպությունները և խորհրդային հասարակայնու-
թյան ամբողջ ակտիվը.— գյուղերի կուտ. ընկերները, պրոֆմիտ-

թյունները, կոմսոմոլը, գյուղատնտեսները, հողաշխատակիցները, գյուղխորհրդի և կոոպերատիվ-խորհրդատեսական ակտիվը, կին-պատգամավորուհիները, քաղ-լուսավորական աշխատակիցները, ուսուցիչները, դպրոցները, փորձակայանները և այլն:

Անցյալ տարվա նման գործադիր կոմիտեներին և գյուղխորհուրդներին կից տոնի նախապատրաստման համար պիտի կազմակերպել հատուկ հանձնաժողովներ:

Այդ հանձնաժողովի նախագահությունն իր վրա յն վերցնում գործադիր կոմիտեյի կամ գյուղխորհրդի նախագահը: Տոնը հաջող անցկացնելու համար նա յն պատասխանատու:

Հանձնաժողովի աշխատանքներին մասնակցելու պիտի ներգրավել պետական հիմնարկների, տնտեսական օրգանների, հասարակական կազմակերպությունների և մամուլի օրգանների ներկայացուցիչներին:

Յուրաքանչյուր շրջան, տեղական պայմաններին համապատասխան, մշակում և տոնն անցկացնելու ծրագիր:

Նա հասարակայնությունը մասնակցից և դարձնում կուլեկտիվացման ու ձերքի ուր կազմակերպելու աշխատանքներին:

Հանձնաժողովը՝ որակներների և ժուրնալների միջոցով լայն պրոպագանդ և մղում և ազդարնակությունը իրադեկ դարձնում կուլեկտիվացման, խորհրդունաբարություն, բերքի բարձրացման, անասնաբուծություն, դարգացման, տեխնիկական կուլտուրաների ասպարեղում ձեռք բերած նվաճումների մասին:

Հանձնաժողովը մշակում և ձեռնարկումներ՝ ուղի-մրցման և գյուղատնտեսական ցուցահանդեսների կազմակերպման համար, դարգեկատրելու գյուղատնտեսական բնագավառում ձեռք բերած նվաճումները, կուլեկտիվացման լավագույն աշխատանքները, բերքատվություն բարձրացումը և այլն:

Հանձնաժողովն իր վրա յն վերցնում կուլեկտիվացման և բերքի ուր անցկացնելու նախապատրաստական կազմակերպչական բոլոր աշխատանքները:

Հանձնաժողովի՝ իր ժամանակին աշխատանքների սկսելուց ել կախված և տոնի հաջողությունը, նրա տնտեսական-քաղաքական նշանակությունը:

Այն շրջաններն և գյուղխորհուրդները, վորոնք կմբռնեն, վոր կուլեկտիվացման ուրը վո՛չ թե վորեվե լրացուցիչ բեռնավորումն և աշնանային յեռուն աշխատանքների ժամանակ, այլ հանդիսանում և այդ աշխատանքներ լրացուցիչ մասը— լայն մասսայական աշ-

խատանքներից մեկը,— այդպիսի շրջաններն ու գյուղխորհուրդները հատկապես պիտի դրվեն կարմիր տախտակին:

Անցյալ տարի վո՛չ բոլոր կուլեկտիվացման աշխատանքները հաջվորություն կուլեկտիվացման ուրվա նշանակություն քաղաքական կարեվորությունը, վո՛չ բոլոր բավականաչափ դնահատեցին այդ ուրվա նշանակությունը՝ աշնանային աշխատանքները կատարելու և դեպի կուլտեսեսությունները նոր ուժեղ հոսանք կազմակերպելու համար: Մտորին կուլեկտիվացման կազմակերպություններից շատերը դտնում և յին, վոր այդ տոնը պիտի անցկացնեն խորհրդային-հասարակական և կուլեկտիվ-կոոպերատիվ կազմակերպությունները միայն:

Այս աշնանը կուլեկտիվացման կազմակերպությունները լավ պիտի հիշեն, վոր նրանց պարտականությունն է— կենտրոնական կոմիտեյի հունիսյան պլենումի վորոշումների նշանաբանով հիմնական հումքային շրջաններում, աշնանային աշխատանքների հիման վրա, ավարտել համատարած կուլեկտիվացումը և նրա հիման վրա լիկվիդացիայի յենթարկեն կուլեկտիվությունը, վորպես դասակարգ, 1932 թվին՝ բամբակացան շրջաններում և 1932-33 թ.՝ մնացած շրջաններում:

Կուլտեսական կազմակերպություններն այդ աշխատանքներին պիտի քաշեն տեղական ամբողջ ակտիվը, կուլեկտիվացման ուրն անցկացնելու համար ամեն կերպ պիտի ներգրավեն տեղական ֆարերիկ-գործարանային ձեռնարկումների բանվորներին, հիմնական մասսային, պրոֆիտությունների բոլոր անդամներին, հողագործական և անասնաբուծական խորհրդատեսություններն ու ՄՏԿ-ի բոլոր բանվորներին և անտառային բոլոր բանվորներին: Ամեն կերպ պիտի ամբապնդել արդյունաբերական բանվորների արտակերպ պիտի ամբապնդել արդյունաբերական բանվորների արտակերպ պիտի կապը կուլտեսեսությունների և կուլտեսեսությունների մտնող չբավոր-միջակ մասսայի հետ:

Անհրաժեշտ է աշխուժացնել շեֆական կազմակերպություններին աշխատանքը գյուղում: Շեֆական կազմակերպությունները ամբողջ ֆրոնտով իրենց աշխատանքներն ևլ ալևի մոտիկից պիտի հարմարեցնեն սոցիալիզմի վերջնական հարձակման խնդիրներին:

Կուլեկտիվացման և բերքի ու անցկացնելու համար, մեծ պարտականություն կունենան և ընկնում նաև կոմսոմոլի կազմակերպության վրա:

Անցյալ տարի աշնանային գյուղատնտեսական կամպանիայի առաջադրանքներն արագ կատարելու համար կոմսոմոլի կենտրոնական կոմիտեն բոլոր ուժերը և կուլտեսեսական ու անհատական

բառարկ-չքաղորական և միջակ յերևտաարդ մասսային մօրիլ-
դացիայի յենթարկելու նպատակով՝ արտադրական կոլտնտեսական
արշավ հայտարարեց :

Այս աշխատանքի նախաձեռնութիւնը պիտի ել ավելի ընդլայ-
նել ու խորացնել :

Յերևտաարդութեան արտադրական-կոլտնտեսական արշավը
կոլեկտիվացման ու բերքի որովա նախապատրաստման համար պի-
տի հանդիսանա հարվածային ողակները մեկում :

Կոլեկտիվացման և բերքի որովա հետ կապված աշխատանքնե-
րից վո՛չ մի կոմունիստ և վո՛չ մի կոմսոմոլ հեռու չպիտի մնա, այլ
ամեն կերպ պիտի դիմադրի. կոլտնտեսականների նախաձեռնու-
թյունն և կոլտնտեսական ջրավոր-միջակ մասսայի շարժումները,
նրանց պայքարը համատարած կոլեկտիվացման և գրա հիման վրա
կուլակութիւնը, վորպես դատակարգ, լիկվիդացիայի յենթարկե-
լու համար :

Գյուղխորհուրդները հանդիսանալով պրոլետարական դիկտա-
տուրայի որգանները գյուղում, պիտի դառնան կոլեկտիվացման
ու բերքի որովա կազմակերպիչ որգանները : Պիտի աշխուժացնել
գյուղխորհուրդներին կից բաւարակ չգալորական խմբակների աշ-
խատանքները :

Կոլեկտիվացման սրը ցույց կտա, թե այն կամ այն գյուղխոր-
հուրդը՝ գյուղի սոցիալիստական վերակառուցման խնդիրներն
կիրառելիս ինչ չափով և ինքը վերակառուցվել :

Այն գյուղխորհուրդը, վոր մասսայական կոլեկտիվացման ա-
ւրնչութեամբ՝ հրապարակ յեկած նոր խնդիրները կիրառելիս չի
վերակառուցել իր աշխատանքները և չի դիմադրել կոլտնտէշար-
ժումը, իրոք հանդիսանում և կուլակային խորհուրդ, և անընդու-
նակ՝ կիրառելու խորհրդային շինարարութիւնը :

Այն գյուղխորհուրդը, վոր յետ և մնում գյուղի վերակաղ-
մութեան տեմպերից՝ անմիջապէս պիտի վերընտրվի :

Կոլեկտիվացման ու բերքի սրը բացի անտեսական ու քաղաք-
ական նշանակութիւն ունենալուց, — կուլտուրական խոշոր դեր և
խաղում :

Ուստի այն անցակցներու ժամանակ մյուս հարցերին զուգըն-
թաց անհրաժեշտ և մեծ ուշադրութիւն դարձնել կուլտուրական
հեղափոխութեան և կենցաղի բարելավման հարցերին :

Կոլեկտիվացման որին պիտի ի հայտ բերել կուլտուրական աշ-
խատանքները, ցույց տալ, թե այդ բնագավառում ի՞նչ հաջողու-

թիւններ ու թերութիւններ կան : Կոլտնտեսութիւններում այդ
որովանք պիտի հարմարեցնել կուլտուրական նոր հիմնարկների բա-
ցումը (ակումբներ, կարմիր անկյուններ, մանկամուրներ, ուս-
դիտարճավորման, գրադարաններ, կոլտնտեսական համալսա-
րաններ, լիկեյաններ և այլն) :

Կոլեկտիվացման և բերքի սրը լայնորեն պիտի ոգտադրծել
կուլտ-արշավ ծավալելու, անդրադիտութեան վերացման, ընդհա-
նուր ուսման, նախադպրոցական կրթութեան և պոլիտեխնիկա-
ցիայի համար :

Կուլտ-կրթական հիմնարկները (գպարցներ, գրադարաններ,
կարմիր անկյուններ և այլն՝ իրենց ակտիվով) հանդիսանալով լու-
սավորական աշխատանքների կազմակերպիչները գյուղում, պիտի
հայտարարեն աւալելագույն նախաձեռնութիւն՝ բերքի ու կոլեկ-
տիվացման տոնն անցկացնելու համար ներգրավելու խորհրդային
հասարակայնութիւնը և կոլտնտեսական գյուղատնտեսական մաս-
սային :

Կուլտ-կրթական հիմնարկները՝ խմբակների, լիկեյանների,
ժողովների, զբոյցների, հալարույթների, պատի լրագրերի ու
զպրոցականների միջոցով ազդարնակութեանը իրադէկ պիտի անեն
տոնի մասին :

Կուլտ-կրթական հիմնարկները պիտի ոգնեն՝ ցուցահանդեսի
համար ժողովելու նյութեր և նմուշներ, ոգնեն կոլտնտեսութիւն-
աներին՝ ցույց տալու իրենց փորձերն ու նվաճումները, ոգնեն լույս
ընծայելու պատի լրագրեր, բազմատիրաթներ և տպագիր լրագ-
րեր, նպատեն կազմակերպելու դրքերի ցուցահանդես և վաճառք,
կազմակերպելու տեղեկատու սեղան, գյուղատնտեսական անկյուն
և այլն : Կուլտ-աշխատողները պարտավոր են ակտիվ մասնակցու-
թիւն ցույց տալ տոնի որովան համար պատրաստվելիք գեղարվես-
տական բաժնում նախորոք պատվիրելով կինո-ֆիլմաներ, պլա-
կատներ, լողունդներ և այլն :

Տոնի նախապատրաստական աշխատանքների մեջ ակտիվ դեր
պիտի խաղան մասսայական կազմակերպութիւնները, ինչպէս Պա-
ջը-Ավիտիւմը, Մարտնչող Անաստվածների Միութիւնը և այլն :
Անաստվածները զործով պիտի ցույց տան, վոր նրանք դիտեն պայ-
քարել տերտերական աշխուհակութիւնների դեմ և կարող են վե-
րացնել տերտերական, աշխուհային բազմաթիվ տոնքի հետեւան-
բով տեղի ունեցող պարապուրդները :

Գյուղական վո՛չ մի կազմակերպութիւն չի կարող հեռու

մնալ կոլեկտիվացման ու բերքի որը անցկացնելու նախապատրաստական աշխատանքները :

Տոնի համար պատրաստվելը ապարդյուն ժողովներ ու նիստեր դնամարելու մեջ էի կայանում : Պատրաստվել— կնշանակի հնդամյակի 3-րդ տարվա աշնանային խնդիրների շուրջը լայն մասնաճյուղին մոբիլիզացիայի յենթարկել : Տոնի պատրաստման համար ներգրավել յուրաքանչյուր կոլտնտեսականի, խորհ. տնտեսության և ՄՏԿ յուրաքանչյուր բանվորի, յուրաքանչյուր— չքավոր ու միջակ մենատնտեսի, նրանց յեռանդի բերել՝ կոլեկտիվացման ու բերքի առնին նորանոր հաղթանակներ ձեռք բերելու : Ահա տեղական բոլոր կազմակերպությունների մարտական խնդիրները :

ՍՏՈՒԳԱՏԵՍԻ ՈՐ

Տոնը պիտի կատարել, ինչպես չրջանային կենտրոններում, նույնպես և անմիջականորեն գյուղում՝ խորհտնտեսություններում և կոլտնտեսություններում :

Փորձը ցույց է տվել, վոր տոնի կատարումը ամենից լավ է սկսել գյուղից, և յերբ կհայտնաբերվեն առանձին խորհտնտեսությունների, կոլտնտեսությունների ՄՏԿ ու գյուղխորհուրդների ստուգատեսների արդյունքները, ապա տոնը փոխադրել չրջանային կենտրոն :

Գյուղում անմիջականորեն կենդանի որինակով պիտի ցույց տալ կոլեկտիվացման արտադրական-տեխնիկական նվաճումները ու հաջողությունները :

Նպատակահարմար է չրջանային կենտրոնում ուշադրությունը կենտրոնացնել ամբողջ չրջանի ըդհանուր խնդիրների վրա : Այստեղ կազմակերպել չրջանային գյուղատնտեսական ցուցահանդես, չրջանային արտադրական խորհրդակցություն, որինակելի աշխատանքների պարզեցվածում և զարկ տալ չրջանի հետագա աշխատանքներին :

Որվա գլխավոր խնդիրն է լինելու— խորհտնտեսությունների և կոլտնտեսությունների նվաճումների ստուգատեսը : Յեվ այդ ստուգատեսում ինչպես շրջանային կենտրոնում, նույնպես և գյուղում պիտի ապահովել գյուղի աշխատավորական լայն մասսայի մասնակցությունը :

Ամբողջ չրջանի հարեվան կոլտնտեսությունների և չքավոր-միջակ մենատնտեսների մասնակցությամբ այդ որը պիտի հրավիրել խորհտնտեսական և կոլտնտեսական ակտիվի լայն խորհրդակցություն :

Այդ կոնֆերենցիաներում պիտի ամփոփվեն տնտեսական տարվա արդյունքները : Պիտի ստուգվեն հացամթերումների կատարումը, աշնանացանի և աշնանավարի ընթացքը, ինչպես և անասնաբուծության կազմակերպումը : Պիտի ստուգվեն կոլտնտեսական ներկրտնտեսական և խորհտնտեսական սոցմրցման պայմանադրերը, պիտի պարզեցվածվեն հարվածայիններն ու հարվածային բրիգադները և կազմակերպվեն նոր բրիգադներ՝ վերացնելու դոլթյուն ունեցող ձեղվածքները, կնքվեն սոցմրցման նոր պայմանագրեր :

Կոլեկտիվացման որը պիտի հավերժացնել պրոմֆինպլանների գերակատարումով :

Կազմակերպել ցորենի և տեխնիկական կուլտուրաների բերքի կարմիր դոմակները, հերկել լրացուցիչ հեկտարներ : Կազմակերպել կոլեկտիվացման որվա անվամբ նոր կոլտնտեսություններ, լրացուցիչ կերպով գրվել հնդամյակի 3-րդ վճռական տարվա փոխառության և այլն :

Կոլեկտիվացման ու բերքի որին պիտի ծավալեն խոշոր գյուղատնտեսական շինարարության մասսայական փորձերի փոխանակում : Խորհտնտեսությունների և կոլտնտեսությունների հաշվետվությունները պիտի լսել բոլոր կոնֆերենցիաներում ու խորհրդակցություններում : Պիտի քննել և ստուգել, թե այս կամ այն խորհտնտեսությունը, կոլտնտեսությունը, կամ գյուղխորհուրդը ի՞նչ է արել կոլեկտիվացման գործի համար, գյուղի սոցիալիստական վերակառուցման համար :

Պիտի ամփոփվեն հավաքագրող բրիգադների աշխատանքների արդյունքները, քննվեն՝ թե ի՞նչ են արել նրանք կոլտնտեսությունների ընդարձակման համար :

Պիտի ձեվակերպվեն հասունացած նախաձեռնող խմբակների՝ արտելի կանոնադրության անցնելը :

Անհրաժեշտ է ուշադիր կերպով քննել համատարած կոլեկտիվացման ավարտմանը խանգարող բոլոր խոչնդոտները և նշել նրանց վերացման միջոցները :

Կոլեկտիվացման որին անհրաժեշտ է լսել նաև կոլտնտեսականների հաշվետվություններն իրենց գյուղի չքավոր-միջակ մենատնտեսների ժողովում՝ կոլտնտեսական տարվա արդյունքների և գալիք տարվա անելիքների մասին :

Նույն այդ նպատակով պիտի կազմակերպել հաշվետու բրիգադների դործուղումներ՝ զեպի հարեվան գյուղերը՝ չքավոր

միջակ մենատնտեսներին և հարեւան կոլտնտեսականներին գեկու-
ցելու համար :

Վերին առաժնային ցանկալի յե մենատնտեսների եքսկուրսիաներ
կազմակերպել գեպի կոլտնտեսութեաններն ու խորհատնտեսու-
թեանները, նոր կոլտնտեսութեաններ՝ գեպի հին կոլտնտեսու-
թեանները և այլն :

Կոլտնտեսութեանները պիտի ցույց տան, թե իրենք ի՞նչպե-
տե կատարել արտադրական պլանները, իրենց մոտ ինչպե՞տե կազ-
մակերպված աշխատանքները և յեկամուտների բաշխումը, գյու-
ղատնտեսութեան մեջ ի՞նչպետե և ոգտադործվում տեխնիկան, ի՞նչ-
պետե և բարձրանում կոլտնտեսականների նյութական և կուլտուր-
կենցաղային կյանքի մակարդակը :

Առանձին ուշադրութեամբ պիտի ըննարկվեն հնգամյակի գա-
լիք, վերջին յեղրականիչ տարվա, հիմնականում համատարած կո-
լեկտիվացումն ավարտելու և կուլակութեանը վերադառնալու դասակարգի
լիկվիդացիայի յեկտարկելու տարվա նախնական նշումները :

Տոնի որը պիտի կազմակերպել մասսայական ցույցեր, յերթեր,
միտինգներ :

Պիտի հոգ տանել ցույցերը գեղարվեստորեն կազմակերպելու
վրա (պլակատներ, կարմիր դրամակներ, գեղեցիկ տեսարաններ և
այլն) : Տոնի որվան կարելի յե հարմարեցնել հատուկ զբոսանքներ,
կարեւորալներ, դրամատիկական ու յերգեցիկ խմբեր, յերածշուո-
թեան, շարժական թատերաբեմեր :

Խորհատնտեսութեաններ և կոլտնտեսութեանների գրողական խում-
բակները, գրականութեան նորակոչիկները պարտավոր են ողնել՝
գեղարվեստորեն կազմակերպելու կոլտնտեսութեանների հաշվե-
տվական կամպանիաները : Բեմեր, պարեր, յերգեցողութեան, այս
բոլորը պիտի ոգտադործեն՝ մասսայի մեջ ամրապնդելու կոլտնտե-
սական մեծ տարվա նվաճումները :

Տոնն անցկացնելու կենտրոնական ողակներից մեկը անպայման
իանդիսանում են գյուղատնտեսական ցուցահանդեսները :

Անցյալ տարվա բերքի տոնը համարյա բացառապետ հիմնված
եք այդ տարվա ցուցահանդեսներին վրա :

Կոլտնտեսական գյուղի պայմաններում ցուցահանդեսները պի-
տե նպատտեն մեմատնտեսներին կոլեկտիվացման ուղիների վրա
փախադրելու, կոլտնտեսական արտադրութեանը բարելավելուն և
փորձերի փոխանակութեան :

Այսպետ, որինակ, չըջանում հայտնի տեղական գյուղացի
Մարտիրոս Մարտիրոսյանի յեկամուտների ցուցադրումը մինչև

կոլտնտեսութեան մտները և կոլտնտեսութեան մտներուց հետո ունի
ալեկի յոշոր նշանակութեան, բան տնհատ գյուղացի— սիրողի
բոլոր ծանրաքաշ գղումները :

Ցուցահանդեսը շատ շոջակիկ կերպով պիտի ցույց տա կոլ-
տնտեսական աշխատանքի առավելութեանները մենատնտեսների
աշխատանքների նկատմամբ, պիտի կենդանի որինակով ցույց տա
կուլեցութեան ձեռք բերած հաջողութեանները գյուղի սոցիալիս-
տական վերակառուցման գործում :

Ցուցադրված յուրաքանչյուր իր մակադրված պիտի լինի, ուր
մանրամասնորեն նկարագրված նրա տեսակը, անունը և ստանալու
ձեկերը :

Նկար—պլակատներով ու գիւղրամներով պիտի ցույց տրվի
կոլտնտեսութեանների կազմակերպչական և տնտեսական բնդհա-
նուր աճումը : Այտեղ պիտի ցույց տալ կոլտնտեսութեանների
անդուտների թվի աճումը, ցանքերի տարածութեան ընդարձակումը,
և անասունների թվի աճումը, պետական պոտադրանքների կատա-
րումը, բերքի և կիթի բարձրացումը, կապիտալի և արտադրանքի
աճումը, կոլտնտեսութեանների յեկամուտը, աշխատանքի կազմա-
կերպման ձեկերը և յեկամուտների բաշխումը կոլտնտեսութեաննե-
րում : Այս բոլորը ամենից լավ և ցույց տալ յուսանկարներով :
Վորեն նվաճում ցույց տալու համար անհրաժեշտ և այն համեմա-
տել մի այլ բանի հետ— որինակ՝ անցյալ տարվա նվաճումների հետ,
կամ տնհատական տնտեսութեան հետ :

Ցուցահանդեսում շատ ցանկալի յե նոր մեքենաները ցույց տալ
աշխատելիս, մանավանդ՝ այնպիտի մեքենաներ, վորենը չըջակա
աղդարնակութեանը դեռ քիչ են ծանոթ : Զեթե արակտորը հայտնի
յե, ապա պիտի ցույց տալ սկոտահատի աշխատանքը, վուշահատը,
կամ վարեն մի նոր մեքենա :

Ցուցահանդեսում շատ կարելիք և գյուղատնտեսական և կոլ-
տնտեսական գրակամութեան վաճառելը :

Ցուցահանդեսում արդյունքներն ամփոփելով՝ պիտի նշել նաե
տվյալ չըջանում և առանձին կոլտնտեսութեաններում՝ կոլեկտի-
վացման հետագա զարգացման ուղիները :

Քաղաքներում— գյուղացու տներում, բանվորական ախումբ-
ներում, գարոցներում պիտի կազմակերպել հատուկ յերեկոներ :
Հիմնականում այտեղ ևս տոնի նշանակութեանը մնում և նույնը,
տակայն չեշոր պիտի դնել գյուղի պրոլետարական դեկավարութեան
և այդ դեկավարութեան ստուգատեոի վրա : Յարբիկաներում և
դործարաններում պիտի գեկուցվեն չեֆարկյալ գյուղերի տարեկան
աշխատանքների արդյունքների մասին :

Չափազանց կարեւոր և կազմակերպել պատգամավորների փոխանակութեան: Կոլտնտեսութեանները՝ ղեկի գործարան, բանավորները՝ ղեկի կոլտնտեսութեանը: Այդ որվան պիտի հարմարեցնել սոցմբցման հին պայմանագրերի ստուգումը, և նորերի կնքումը՝ գործարանի կամ ֆաբրիկայի և կոլտնտեսութեան միջեւ, պրոմֆինպլանները կատարման ստուգումը և նոր տնտեսական տարվանք գիմավորելու պատրաստ լինելը:

Կոլեկտիվացման և բերքի առնի կատարելը անպայման չի կարող սահմանափակվել միայն կոլտնտեսական գյուղով: Սորհորնտեսութեանները նույնպես քիչ աշխատանք չունեն կատարելու: Նրանք նույնպես, ինչպես կոլտնտեսութեանը չքաղութի մասսաներին պիտի ցույց տան իրենց ունեցած հաջողութեանները և նվաճումները:

Յուրաքանչյուր խրիտոնեսութեան այդ որը պիտի անցկացնի վորպես խոշոր անցկալիստական հողագործութեան ստուգման որ:

Առանձնապես պիտի ցուցադրի իր ղեկը՝ չրջակա գյուղացիութեան և կոլտնտեսութեանների վերաբերմամբ վորպես կազմակերպչի և խորտնտնարարութեան գործը խթանողի, վորպես գործարքային աշխատանքի որինակելի կազմակերպողի:

Ստուգատեսի նախապատրաստման ու կերպման համար պիտի ներգրավեն կոլտնտեսականների միլիոնավոր մասսաները և խորհտնտեսութեանների ու ՄՏԿ բանվորները:

Պիտի լավ հիշել ընկ. Ստալինի խոսքերը.—

«Այժմ՝ միայն մենք, վորակավոր բայլեմիկներն չենք, այլ իրենք՝ կոլտնտեսութեանների գյուղացիներն են, տասնյակ հազարավոր գյուղացիներն են—կոլտնտեսական գործի կազմակերպողներն ու ագիտատորներն են, վոր պիտի առաջ տանեն կոլեկտիվացման դրուը: Իսկ գյուղացի ագիտատորները հանդիսանում են կոլեկտիվ շարժման դարմանալի ագիտատորներ, վորովհետեւ նրանք հողուտ կոլտնտեսութեանների կգտնեն աշխարհի պատճառարանութեաններ, վորոնք հասկանալի և ընդունելի կլինեն մնացած գյուղացի մասսայի համար, վորպիսիք մենք վորակավոր բայլեմիկներն նույնիսկ նկատել չեն կարող»:

Յուրաքանչյուր կոլտնտեսական, յուրաքանչյուր կոլտնտեսուհի պիտի դառնա կոլտնտնարարութեան ակալի ագիտատոր և դեպի կոլտնտեսութեանները նոր հոսանք կազմակերպող:

Կոլեկտիվացման որը պիտի հավերժացվի նոր տասնյակ հազարավոր անհատականների կոլտնտեսութեաններ մտնելով, պիտի

ողնի ՌՍՀՄ ավարտելու համատարած կոլեկտիվացումը և վերջնականապես լիկվիդացելու յենթարկելու կոլալութեանը վորպես դասակարգ:

ԲԱՐՁՐ ՏԵՄՊԵՐԻ ՀԱՄԱՐ

Կոլեկտիվացման ու բերքի որը պիտի լայնորեն ոգտագործել՝ պարզարանելու միջազգային դրութեանը, պարզարանելու մեր խաղաղասիրական քաղաքականութեանը:

Ձեկուցումներում, պլակատներում և լողուններում պիտի ընդգծել, վոր կոլտնտեսական շարժման հետագա հաջողութեանները, աշխատանքի կամպանիայի հաջող կիրառումը, իր ժամանակին հացածթեման պլանի կատարելը, հազամյակի 3-րդ վճռական տարվա փոխառութեան հաջող իրացումը ամրապնդում են մեր յերկրի հզորութեանը, ուժեղացնում մեր ինքնապաշտպանութեանը:

Կոլեկտիվացման ու բերքի որը մենք պիտի լայն կերպով ոգտագործենք նաև հազամյակի պրոպագանդայի համար: Անհրաժեշտ է լայն ու շոշափելի կերպով բացատրել կոլեկտիվ շարժման և սոցիալիստական ընդհանուր շինարարութեան միջեւ գոյութեան ունեցող անմիջական կապը և ցույց տալ, վոր՝

Կոլտնտնարժման հետագա հաջողութեանները կախված են ժողովրդական տնտեսութեան ընդհանուր վերակառուցման հաջողութեաններից, յերկրի ինդուստրացման տեմպերից:

Ի՞նչ է այժմ կատարվում կապիտալիստական աշխարհում:

Տնտեսական խորունկ քայքայումը, ճգնաժամը ընդգրկել է կապիտալիստական ամբողջ աշխարհը:

Կապիտալիստական յերկրների և նրանց անդրովկյանյան տիրապետութեանների գաղութների քաղաքներում և գյուղական վայրերում անասլի չափերով դարդացել և գործադրելութեան ու չքավորութեանը:

Կապիտալիստական աշխարհն ավելի ու ավելի յե խառնափոխութեամբ լույսը չի յերկում:

Կապիտալիստները ցույց են տալիս տնտեսութեան կազմակերպելու իրենց ամբողջ անընդունակութեանը: Կապիտալիզմը փոտում է իր արմատների վրա:

Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգների և Կանադայի երկատորներում ընկած են միլիոնավոր տոններով հացահատիկ, մինչդեռ այդ յերկրներում միլիոնավոր մարդիկ սովի յեն մատնը:

ված: Շախտերի մոտ հակադասական սարերով անուխ և կիսոված, իսկ միլիոնավոր մարդիկ ցրտից սառչում են՝ հնարավորություն չունենալով մի կտոր անուխ գնելու: Սանութները տրաքում են ապրանքների շատությունից, սակայն գնող չկա:

Կապիտալիստները վորպեսզի իրենց ծախսերը ծածկեն, կրճատում են աշխատավարձը, կրճատում են արտադրությունը, Փարիզյաններից ու գործարաններից դուրս են չալրտում միլիոնավոր բանվորներ, գրանով ե՛լ ավելի մեծացնելով գործազուրկների թիվը: Իսկ այդ ամենն ավելի յե պակասեցնում ապրանքների պահանջը, ավելի յե խճճում տնտեսությունը:

Կապիտալիստները, չնորհով խոշոր ընկերությունների միջանց հետ ունեցած համաձայնության, պահում են ապրանքների նախկին գները, իսկ աշխատավորությունը միջոցներ չունի, վորպեսզի ապրանք գնի:

1929 թ. համեմատությամբ արտադրությունը կրճատվել և՛ Միացյալ Նահանգներում՝ 32 տոկոսով, Գերմանիայում՝ 28 տոկոսով, Անգլիայում՝ 19 տոկոսով, Լեհաստանում՝ 25 տոկոսով: Վերջին տեղեկությունները խոսում են արտադրության հետագա կրճատման մասին:

Կապիտալիստական յերկրների գործազուրկությունն ընդունում և համաշխարհային կատաստրոֆայի բնույթ:

Արտասահմանում անցյալ տարի հաշվվում էր 17 միլիոն գործազուրկ: Այս տարվա սկզբին այդ թիվը հասել էր 35 միլիոնի: Այժմ նա ավելի մեծ է:

Հարուստ Միացյալ Նահանգներում ամեն որ սովից մեռնում և 1000 մարդ:

Պերեմիշլում (Լեհաստան) աշխատանքի բորսայի կառավարիչը գործազուրկների պատգամավորներին հայտարարել է. — «Իմ գրամարկդում փող չկա: Յես կարող եմ ձեզ տալ մի քանի կոպեկ միայն՝ թո՛ղ գնելու համար, վորպեսզի կախվեք»: Գերմանական խոշոր քաղաքացիներից մեկը ավելի պարզ է ասել. — «Ահհա՛ ժեշտ և, վոր 20 միլիոն գերմանացի սատկի, վորովհետե՛վ պետությունը նրանց կերակրելու համար փող չունի»:

Գերմանիայում որեկան 50 ինքնասպանության դեպք է տեղի ունենում:

Այսպես են փաստերը:

Ընդհանուր տնտեսական ճգնաժամը առաջ է բերել գյուղատնտեսական ճգնաժամ:

Վերջին տարիներս կապիտալիստական հիմնական յերկրներում ցորենի հունձը, նախապատերազմյան չրջանի համեմատությամբ, ավելացել է 10 տոկոսով, իսկ ազդաբնակությունը աճել է միայն 5 տոկոսով: Ազդաբնակչության ընդունակությունը նույնպես չի բարձրացել:

Գյուղատնտեսական կարեւորագույն մթերքների մեծաքանակ գները կիսով չափ, նույնիսկ յերեք քառորդով անցյալի համեմատությամբ, ընկել են: Միլիոնավոր գյուղացիներ չեն արդարացնում մթերքների արտադրության վրա կատարած իրենց ծախսերը: Ճգնաժամն ամենից առաջ խփում է բատրակության, վորը մատնվում է անգործության և աշխատանքի դադանային պայմանների, և մանր չքավոր-միջակ տնտեսություններին, վորոնք մթերքների գների ասպարիզում ուժ չունեն կուլակային և կապիտալիստական տնտեսությունների հետ մրցելու:

Կապիտալիզմը՝ գյուղացիության համար նշանակում և կործանում, իսկ սոցիալիզմը՝ փրկություն: Միայն բանվոր դասակարգի հետ դաշնակցելով ու նրա ղեկավարությամբ կռվելով կապիտալիզմի դեմ՝ գյուղի աշխատավորությունը կազատվի աղքատությունից և ստրկացումից:

ԽՍՀՄ որինակը ամբողջ աշխարհի աշխատավորությանը ցույց է տալիս այդ ճանապարհը:

Այնտեղ՝ հին աշխարհը դեպի կործանումն է գնում, այստեղ՝ ԽՍՀՄ, համաշխարհային պրոլետարիատի յերիտասարդ բրիգադան ավարտում է նոր հասարակակարգի հիմքի կառուցումը. աղատված լինելով կապիտալիզմի խոցերից ու հակասություններից, նա ամբողջ մարդկությանն ազատություն է բերում:

Մենք արդյունաբերությունից վերջնականապես ու անդառնալիորեն դուրս ենք մղել կապիտալիստական տարրերը և՛ այստեղ «ով-ու՛մ»-ի հարցը լուծել ենք հողուտ սոցիալիզմին:

Մենք համատարած կոլեկտիվացման վրա ամարտում ենք կուլակության, վորպես դասակարգի, լիկվիդացիան: Սոցիալիզմի հաղթանակի հարցը մեր յերկրում վճռված է և սոցիալիզմի հաղթանակը լիովին ապահովված է:

Ինչուստրիալիզացիայի չտեսնված արագ տեմպը, արդյունաբերական արտադրանքի արագ աճումը, հսկա գործարանների ու Փարբիկաների շինարարությունը խորհանոտությունների ու կուլտնտեսությունների չտեսնված զարգացման հետ միասին՝ ազդացու-

ցում են սոցիալիստական սեկտորի բաշահայտ գերակշռումը և ապահովում են սոցիալիզմի հաղթանակը յերկրի ներսում :

Հնգամյակի առաջին տարվա արդյունքները ցույց տվին, վոր մենք կարող ենք հնգամյակը չորս տարում լիովին իրագործել, իսկ մի քանի հիմնական ցուցանիշների վերաբերմամբ—յերեք տարում :

Ե՛լ ավելի ցայտուն կերպով են դժվում ուժեղ ինդուստրացիոզ յերկրի ուրվագծերը, վորտեղ չկան ստրուկներ, տերեր, այլ բոլորն աշխատում են իրենց համար :

Ամբողջ յերկիրը սկսած ամենախուշ անկյուններից, վորքեկ քաղաքներից մինչև վ արդյունաբերական խոշոր կենտրոնները, խաղաղ ովկյանուից մինչև վ Լեհական սահմանը, Մուրմանիկից մինչև Նախկրայ գրադված և չտեսնված լարված շինարարությամբ :

Յերեկվա անապատներում նորագույն տեխնիկայի հիման վրա բուսնում են հսկա խորհանոտություններ, կառուցվում են նոր գործարաններ, հիմնվում են նոր քաղաքներ :

Մեր արդյունաբերությունը նախապատերազմյանի համեմատությամբ արդեն կրկնապատկել և իր արտադրանքը : Միայն այս 1931 թվի արտադրանքի աճումը ավելի կլինի նրանից, ինչվոր նախապատերազմյան արդյունաբերությունը տալիս էր մի ամբողջ տարում :

Ամբողջ հիմնական կապիտալի արժեքը, վոր հնդախոթության տարիներում ներգրված և արդյունաբերության մեջ՝ հառնում և 14 միլիարդ ուրբլու, հանդեպ այն 5 միլիարդի, վորը կապիտալիստական Ռուսաստանը կուտակել էր իր պատմական գոյությամբ ամբողջ ժամանակաշրջանում :

Միայն 1931 թվի կապիտալ շինարարության մեջ ներգրվում և 7 միլիարդ ուրբլի, իսկ ձեռնարկումների, Փարբրիկաների, գործարանների, վորոնք արդեն անցնում են շահագործության, հավասար և 4 միլիարդ ուրբլու :

1931 թ. գոյություն ունեցող գործարանների շարքն են անցնում (մի մասն արդեն անցել են) 518 նոր խոշոր Փարբրիկաներ, գործարաններ և այլ ձեռնարկություններ :

Դրանց մեջ 95 նոր շախտ, 12 նոր դոմեննա վառարաններ, 34 նոր մարտեններ, 8 խոշոր դունավոր մետաղի գործարաններ, 30 մեքենաշինարարական գործարան : վերջիններիս մեջը Սարատովի և Ռոստովի կոմբայնների գործարանները, վորոնցից յուրաքան-

չյուրը տարեկան ունի 125 միլիոն ուրբլու արտադրանք : Մեզ մոտ Ձորադեսը, Քանաքեռդեսը, Յեմչինը և մի շարք նոր ելեկտրոկայաններ :

Այս դեռ յուրորը չեն յեղած գործարանների շարքն են անցնում 3 նոր ալտո-տրակտորային կառուցումներ.—Սարկովի տրակտորի գործարանը՝ 50 հազար տրակտորի արտադրությամբ (արդեն աշխատելու պատրաստ), Նիժնեովոդորդի ավտոմոբիլի գործարանը՝ տարեկան 140 հազար ավտոմեքենայի արտադրությամբ և վերակառուցված ՍՄՈ-տարեկան 25 հազար ավտոմեքենայի արտադրությամբ :

Ուժեղ տեմպով զարգանում և նավթային, ելեքտրոտեխնիկական, շինարարական և քիմիական արդյունաբերությունը :

Կուսակցության Կենտրոնական Կոմիտեյի հիմնական պլենումը ամբողջ լայնությամբ դրեց տրանսպորտի և քաղաքային տնտեսության վերակառուցման խնդիրը :

Այս բոլոր հաջողություններն ու նվաճումները ձեռք են բերված կուսակցության լենինյան ճիշտ քաղաքականությամբ, աջ և «ձախ» ուղորտունիստների դեմ պայքարելով, դատակարգային թշնամու դեմ պայքարելով, շինարարության մեջ բազմամիլիոն աշխատավոր մասնակցի լայն մասնակցության հիման վրա :

Այնտեղ՝ կապիտալիստական ստրկության յերկրներում, աշխատավորին իր ծանրությամբ ու յերկարատևությամբ մաշող աշխատանքին մղում և աղքատությունն ու սովամահ լինելու վախը :

Այստեղ՝ ԽՍՀՄ աշխատույնը պատվի գործ է, փառքի գործ է, արիւնքյան և հերոսության գործ է :

Կապիտալիստական աշխարհը, վոր սկզբում ծաղրով էր վերաբերվում բայլեվիկների «Փանտոտիկ պլանին» այժմ սկսում և վախենալ հնգամյակի իրագործումից, հաղթանակող սոցիալիզմից : «Հնգամյակ» խոսքը դամբանականի դողանջ և հնչում կապիտալիստների ականջին և նարատի կոչ հանդիսանում ամբողջ աշխարհի աշխատավորության համար :

Կապիտալիստական աշխարհը, վոր քայքայվում և ճգնաժամից, ավելի շատ և սկսել յեղ վնասել ԽՍՀՄ վրա հարձակում, ինտերվենցիա գործելու մեջ : Կապիտալիստները վորպեսզի դուրդացիությանը խաբեն՝ ձգտում են համաշխարհային շուկայում հացի ընկած գների մեղքը դրել ԽՍՀՄ վրա : Նրանք մեղ մեղադրում են «դեմպինգի» մեջ, ցորենը ինքնարժեքից պակաս գներով վաճառելու մեջ : Կարծես թե մենք մեր թշնամիներն ենք և չենք ուղում

արտասահմանում չառ աշխատել, վերականգնի ավելի չառ մեղքնաները դնենք վերակառուցվող մեր ժողովրդական տնտեսություն համար:

Խորհրդային իշխանությունը, վոր ծնվել է խաղաղության լուրջագով, հետագայում նույնպես, առանց տատանվելու, կպայքարի խաղաղության համար:

Բայց թող դուշանան մեր թշնամիները:

Կապիտալիստական յերկրներում ճգնաժամը խորանում է, ուժեղանում են դատակարգային հակառակթյունները, սրվում է դատակարգային պայքարը, իսկ մեր տնտեսական ու քաղաքական ուժը աճում է: ԽՍՀՄ վրա ղինված հարձակում դործել, գլխավոր վտանգ կնշանակի նրանց համար, ովքեր կհամարձակվեն խախտել խաղաղությունը և հարձակվել ԽՍՀՄ վրա:

Այս չի նշանակում թե մենք կարող ենք մեր հույսը դնել համաշխարհային պրոլետարիատի վրա միայն և ինքներս անգործություն մտնել: Համաշխարհային բուրժուազիան դեռ շատ ուժեղ թշնամի է: Յեվ միայն ԽՍՀՄ աշխատավորությունը, յերկրի ինքնախաղաղությանն իրենց ուժեղ ամբողջման և համաշխարհային պրոլետարիատի աջակցությամբ կարող են պաշտպանել սոցիալիզմի հայրենիքը, ղիմադրել միջազգային բուրժուազիայի՝ մարդկություն մեծազույն վերածնություն դործը խանգարելու ճգնաժամները:

ԽՍՀՄ յուրաքանչյուր աշխատավորի մարտական խնդիրն է լինելու պայքարել տեմպերի համար, մեր բոլոր շինարարությունը արագ կատարելու համար, մեր պաշտպանությունն ամրապնդելու համար:

«Մենք չպիտի մոռանանք, վոր այս պայմաններում տեմպերի կարուստն ու վիժեցումը--կնշանակի գլուխն ու խորհրդային իշխանությունը ոչիսկ յենթարկել, առում եր ԽՍՀՄ կոմիսարների յուրիուրդի նախագահ ընկ. Վ. Մ. Մոլոտովը համախմբեմական յուրիուրդների 6-րդ համագումարում»:

Յեռ մնացողներին յարում են:

Բայց մենք չենք ցանկանում, վոր մեզ յախեն:

Մենք չենք ցանկանում, վոր մեր սոցիալիստական հայրենիքին յախեն և մենք կորցնենք մեր անկախությունը:

Դրա համար ամենակարճ ժամանակում մենք պիտի լիկվիդացիայի յենթարկենք նրա հասամնացությունը և նրա տնտեսական զարգացման գործը իսկական բայլչեկիյան տեմպերով առաջ մղենք:

«Մենք առաջավոր յերկրներից հետ եմք մնացել 50-100 տարով: Մենք այդ տարածությունը պիտի անցնենք 10 տարում: Իսկ մենք այդ պիտի անենք, կամ մեզ կնգմեն» (Ստալին):

Խորհուրդների 6-րդ համագումարի բանաձեկերում տալած է. «ԽՍՀՄ յուրիուրդների համագումարը ԽՍՀՄ բանվոր դատակարարի և բոլոր աշխատավորներին առաջարկում է՝ յրազործել

Վոչ ավելին, քան՝

այս տաք տարվա ընթացքում տեխնիկական-տնտեսական տեսակետից հասնել և անցնել առաջավոր կապիտալիստական յերկրներին» յոգուեզը:


Վորպեսզի 10 տարվա ընթացքում մենք անցնենք այդ տարածությունը, վորով մենք յետ ենք մնացել կապիտալիստական յերկրներից, դրա համար մենք ունինք բոլոր օրյեկտիվ պայմանները: Միայն պիտի կարողանալ նրանց ոգտագործել:

Ամբողջ աշխարհի բանվոր դատակարգը և դյուզացիական մասսան հույսով նայում են ԽՍՀՄ՝ համաշխարհային հեղափոխության առաջավոր ջոկատի վրա:

Մենք մի գործ ենք կատարում, վորի հաջողելու դեպքում կհեղաշրջվի ամբողջ աշխարհն ու կադատագրվի աշխարհի ամբողջ բանվոր դատակարգը և ամբողջ աշխատավոր դյուզացիությունը:

«Յեվ մենք առաջ պիտի շարժվենք այնպես, վոր ամբողջ աշխարհի բանվոր դատակարգը մեզ նայելով տաի՝ «Ահա՛ նա, իմ առաջավոր յոկառը, իմ հարվածային բրիգադը, ահա՛ նա՛ իմ բանվորական իշխանությունը, ահա՛ նա իմ հայրենիքը: Նրանք տանում են իրենց գարծը, իմ գարծը: Կապիտալիստների դեմ նրանց լավ աջակցենք և բորբոքենք համաշխարհային հեղափոխությունը» (Ստալին):





- 30 -

ՀՀ Ազգային գրադարան



NL0404862

Գինը 25 ԿՈՊ. (2 1/4 Լ.)

1931 - 675

11

28050



Գ. ВОЕВОДИН

ПРАЗДНИК ПОВЕДЫ

Госиздат ССР Армении
Эривань—1931